ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ք. Երևան

13.08.2019թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը,
գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ.Անտոնյանը,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը,

Ընդունել ի գիտություն, որ նիստին բացակայում էր ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցին հայտարարելու մասին.

(Մ.Ամիրյան)

1.1 24.07.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, **1-ին տեղ զբաղեցրած մասնակինցները** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.2 19.07.2019թ-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Սահմանված ժամկետում մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը՝ որոնց ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվեցին անհամապատասխանություններ, մասնավորապես.

-«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի և «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից չէին ներկայացվել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագիրը(երը) և դրա(նց) հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

05.08.2019թ.ին գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և գնումների համակարգողը ծանուցեց մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը /06.08.2019թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող փաստաթղթերը:

09.08.2019թ.ին գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների ներկայացրած ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի Հավելված N 6.1-ով նշվել էր որ ապրանքը երաշխավորված է հոսպիտալներում առկա Storz բժշկական սարքավորումներ արտադրող ընկերության կողմից, ինչը չէր համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ հրավերով սահմանված էր, որ ապրանքը պետք է երաշխավորված լինի հոսպիտալներում առկա Storz, Olympus, Fujinon և Pentax բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ին 05.08.2019թ.-ին ուղարկված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցման մեջ անդրադարձ չէր կատարվել մասնակցի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի Հավելված N 6.1-ով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանություններին, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը /12.08.2019թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Համաձայն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետի, հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի: Սակայն մասնակիցը հավելված N 6.1-ի շտկված տարբերակի փոխարեն 12.08.2019թ.-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանի էլ. Փոստին ուղարկել է գնահատող հանձնաժողովին հասցեագրված գրություն՝ որում ասվում է, որ հրավերի Հավելված N 6.1-ով ներկայացված Անիոզիմ Սիներջի 5 ապրանքը երաշխավորված է հոսպիտալներում ցանկացած բժշկական էնդոսկոպիկ սարքերի՝ այդ թվում նաև Olympus, Fujinon և Pentax բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից, էնդոսկոպիկ սարքերում օգտագործելու համար:

«Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝ ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ում /գնանշման հարցմանը մասնակցելու մասնակցելու դիմում/, հավաստել էր, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ, սակայն վերոնշյալ փաստաթուղթը ներկայացրել է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սքանավորված) տարբերակով, ինչը չի համապատասխանում Կարգի 32-րդ կետի 12) ենթակետի պահանջներին, որում ասվում է. «Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սքանավորված) տարբերակով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ»:

Ինչպես նաև, «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից 09.07.2019թ.-ին ներկայացված հայտում՝ ընթացակարգի հրավերի Հավելված N 3-ով /որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարություն/ «Մեդիտեք» ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Համաձայն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետի 2) ենթակետի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, սակայն «Մեդիտեք» ՍՊԸ-ն ներկայացրել է 04.02.2019թ.-ին կնքված ախտահանիչ նյութերի մատակարարման պայմանագիր՝ որին կից հանձնման-ընդունման արձանագրության մեջ պայմանագրի փաստացի կատարման ժամկետ նշված է 05.08.2019թ., ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /09.07.2019թ/ ներկայացված պայմանագիրը դեռևս պատշաճ ձևով իրականացրած չէր:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2) ենթակետը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով վերջինիս տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Միաժամանակ հանձնաժողովը որոշեց 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից հայտարարել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին:

1.3 13.08.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մյուս մասնակիցների որակավորման չափորոշիչները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, **«Ջետտա» ՍՊԸ-ին՝** (հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով **«Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ)** 1-ին չափաբաժնի մասով, **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**-ին՝ 2-րդ և 4-րդ չափաբաժիններում, հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ:

1.4 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ **«Ինտերմեդ Գրուպ»** ՍՊԸ-ն սույն ընթացակարգի 2-րդ և 4-րդ չափաբաժիններում 18.07.2019թ.-ի 4.2 որոշմամբ ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել էր սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերում ներառված նմանատիպ պայմանագիրը՝ որը բավարար էր նաև 5-րդ չափաբաժնի մասով որակավորման չափանիշներին իր

համապատասխանությունը հիմնավորելու համար, ինչպես նաև հիմք ընդունելով 24.07.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված՝ Կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը, համաձայն որի, «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, գնահատող հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում չներկայացնել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև ծանուցել մասնակցին հրավերով սահմանված ժամկետում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով և նույն կետի 1) ենթակետով նախատեսված փաստաթղթերը /Հավելված N 6 և Հավելված N 6.1/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 17:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) _____ Ա.Նազարյան

Գնահատող _____ Գ.Անտոնյան

Գնահատող _____ Հ.Ավետիսյան

Գնումները համակարգող _____ Մ.Ամիրյան